Քաջարանց գյուղ

Բնակչություն՝ 217

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 26 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1970 մ,
Քաջարանց գյուղը գտնվում է Քաջարան քաղաքից մոտ 2կմ հյուսիս: Քաջարան քաղաքի կառուցումից հետո գյուղը ներառվեց նրա տարածքում և դադարեց ինքնուրույն վարչական միավոր լինելուց, հանվեց բնակավայրերի ցանկից: Ի տարբերություն նախկին Օխչի և Վ.Հանդ բնակավայրերի, որոնց տեղում կառուցվել է քաղաքը, գյուղը պահպանվել էր և գյուղացիների խնդրանքով, 1992թ-ին տարանջատվել է Քաջարան քաղաքից՝ կազմավորելով ինքնուրույն բնակավայր: Անհիշելի ժամանակներից այստեղ բնակավայր լինելու մասին են վկայում հեթանոսական մատուռը, հանքախորշերը, հանքանյութի թափվածքները, ձուլարանների հետքերը: Դրանք վկայում են, որ դեռևս բրոնզեդարում այստեղ մետաղ են ձուլել:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 12006 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2299 հա, որից՝
- վարելահող՝ 34 հա, խոտհարք՝ 158 հա, արոտ՝ 1235 հա, այլ հողատեսք՝872 հա
- բնակավայրերի հողեր՝ 56 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 5 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝3 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 9601 հա,
- անտառային հողեր՝ 35 հա, որից անտառածածկ՝ 35 հա
- ջրային հողեր՝ 7 հա